

Խառը թվերի հանումը

Խառը թվերը հանելու համար

- պետք է համեմատել նվազելիի և հանելիի կոտորակային մասերը
- եթե նվազելիի կոտորակային մասը մեծ է հանելիի կոտորակային մասից, ապա պետք է առանձին-առանձին կատարել ամբողջ մասերի և կոտորակային մասերի հանում և իրար գումարել ստացված արդյունքները:

Օրինակ`

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6}$$

$$\text{Համեմատենք } \frac{3}{6} > \frac{2}{6}$$

Ուրեմն`

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6} = (2 - 1) + \left(\frac{3}{6} - \frac{2}{6}\right) = 1 + \frac{1}{6} = 1\frac{1}{6}$$

- եթե նվազելիի կոտորակային մասը փոքր է հանելիի կոտորակային մասից, ապա նվազելիի կոտորակային մասին պետք է ավելացնել 1` այն հանելով նրա ամբողջ մասից ու կիրառել նախորդ կանոնը:

Օրինակ՝

$$3\frac{1}{6} - 1\frac{5}{6}$$

Համեմատենք $\frac{1}{6} < \frac{5}{6}$

$$\text{Ուրեմն՝ } 3\frac{1}{6} - 1\frac{5}{6} = 2 + 1\frac{1}{6} - 1\frac{5}{6} = 2 + \frac{7}{6} - 1\frac{5}{6} =$$

$$= (2-1) + \left(\frac{7}{6} - \frac{5}{6}\right) = 1 + \frac{2}{6} = 1 + \frac{1}{3} = 1\frac{1}{3}$$

Առաջադրանքներ

- Կատարեք խառը թվերի հանում:

$$12\frac{4}{6} - 7\frac{1}{6} =$$

$$2\frac{5}{12} - 1\frac{5}{6} =$$

$$3\frac{23}{24} - 1\frac{3}{4} =$$

$$14\frac{3}{7} - 11\frac{2}{5} =$$

$$12\frac{3}{25} - 6\frac{2}{100} =$$

$$9\frac{2}{11} - 5\frac{2}{3} =$$

$$9\frac{8}{10} - 5\frac{2}{3} =$$

Աստղանիշի փոխարեն ի՞նչ թիվ գրելու դեպքում կատացվի հավասարություն:

$$* +1\frac{2}{5}$$

$$* +8\frac{3}{10}$$

$$* +11\frac{2}{9}$$

- լայնությունը փոքր է նրա երկարությունից $2\frac{2}{9}$ դմ-ով, հաշվեք ուղղանկյան պարագիծը, եթե նրա երկարությունը 6դմ է: